ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/51

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Մասնակից՝ «Աբգար Խաչատրյան Նիկոլայի» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
«Աբգար Խաչատրյան Նիկոլայի» Ա/Ձ-ի ներկայացուցիչ՝ Վ. Խաչատրյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/20» ծածկագրով գնանշման հարցում, հուշանվերների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 17.02.2020թ.-ի թիվ 26/26-1/2142-2020 գրությամբ «Աբգար Խաչատրյան Նիկոլայի» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 14.02.2020թ.-ի թիվ Ե/40/275-20 գրության հիման վրա, 17.02.2020թ.-ին «Աբգար Խաչատրյան Նիկոլայի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 19.02.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/51 համարի ծածկագիրը և 19.02.2020թ.-ին հրապարակվել www.gnumner.am կայքում:

21.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 21.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 16.03.2020թ.-ին:

2. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 14.02.2020թ.-ի թիվ Ե/40/275-20 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/20» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակներում, 06.02.2020թ. «Աբգար Խաչատրյան Նիկոլայի» ԱՁ-ի կողմից ներկայացվել է հայտ: Հայտերի բացման և գնահատման նիստում արձանագրվել է, որ «Աբգար Խաչատրյան Նիկոլայի» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ: Համաձայն ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի՝ առաջարկվել է կասեցնել հայտերի գնահատման նիստը և «Աբգար Խաչատրյան Նիկոլայի» ԱՁ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել

անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում մասնակցի կողմից անհամապատասխանության շտկում չի կատարվել:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Աբգար Խաչատրյան Նիկոլայի» Ա/Ձ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Աբգար Խաչատրյան Նիկոլայի» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 18.02.2019թ.-ին գրությամբ դիմել է «Աբգար Խաչատրյան Նիկոլայի» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.02.2020թ.-ի թիվ 26/26-1/2142-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում:

Ներկայանալով հրավիրված նիստին, Մասնակցի ներկայացուցիչը հայտնել է, որ տեխնիկական խնդիրների պատճառով ժամանակին չեն ներկայացրել փաստաթղթի շտկված տարբերակը, փոխարենը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված փաստաթղթի շտկված տարբերակն ուղարկել են սխալ էլեկտրոնային փոստի հասցեին:

4. <u>ՍՑ-LO-2020/51 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հուշանվերների ձեռքբերման նպատակով 30.01.2020թ.-ին հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 1-ին, 2-րդ, 3-րդ և 7-րդ չափաբաժիններով սահմանվել են ապրանքների հետևյալ բնութագրերը.

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Սկավառակ	DVD, սկավառակի վրա պատկերված լինի սկավառակում պարունակվող երգերի կամ կատարումների, երգչի կամ երաժիշտի լուսանկարը, պլաստմասե թափանցիկ տուփով, տուփում ներդիր՝ բարձր որակի թղթով և տպագրությամբ, ներդիրին պատկերված լինի ՀԱԷԿ-ի ապրանքային նշանը, տվյալ երգչի կամ երաժիշտի լուսանկարը, հետադարձ կողմում՝ երգերի կամ կատարումների ցանկը (երգերի կամ կատարողների ցանկը համաձայնեցնել Պատվիրատուի հետ), տուփը նախատեսված լինի 1 սկավառակի համար:
2	Գրիչ	ՀԱԷԿ-ի ապրանքային նշանով և կայանի անվանումով՝ Armenian Nuclear Power Plant, գրիչի ապրանքանիշը՝ Schneider կամ համարժեքը, լինի բարձր որակի տպագրությամբ, գույնը կապույտ:
3	Տոպրակ	Նվերի, փոքր, թղթյա ՀԱԷԿ-ի ապրանքային նշանով, ապրանքային նշանի գույնը լինի ոսկեգույն, տոպրակի գույնը փայլուն սպիտակ, բռնակները թելիկներով, տոպրակի հետ միացումը մետաղական օղակի միջով, չափսը՝ 22սմx25սմ:
7	Նոթատետր	Չափսը՝ 150x210 մմ, թերթերի քանակը 60, տողանի, Fedrigoni կամ համարժեքը 85գ/մ2, 0,5% դեղին երանգով, կազմը դեկորատիվ, Fedrigoni կամ համարժեքը, 300գ/մ2, միջուկի տպագրությունը՝ 2+0, ՀԱԷԿ-ի ապրանքային նշանի ստվերային պատկերով, առանց օրացույցի, կազմի դիմային հատվածում ՀԱԷԿ-ի ապրանքային նշանի արծաթափայլ, եռաչափ դաջվածք, միջուկի կողային մասերը արծաթափայլ, միջուկի էջերն ամրանում են կազմին արծաթափայլ մետաղական գալարներով վերևի մասից: Համաձայն ՀԱԷԿ-ի նմուշի:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Աբգար Խաչատրյան Նիկոլայի» Ա/Ձ-ն:

«Աբգար Խաչատրյան Նիկոլայի» Ա/Ձ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/20» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Մասնակիցը թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, 1-ին, 2-րդ, 3-րդ և 7-րդ չափաբաժինների համար առաջարկել է հետևյալ տեխնիկական բնութագրերը.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը
1	DVD, սկավառակի վրա սկավառակում պարունակվող երգերի, երգչի կամ երաժիշտի լուսանկարը, պլաստմասե թափանցիկ տուփով, տուփը նախատեսված 1 սկավառակի համար:
2	ՀԱԷԿ-ի ապրանքային նշանով և կայանի անվանումով՝ Armenian Nuclear Power Plant, գրիչի ապրանքանիշը՝ Schneider կամ համարժեքը, գույնը կապույտ:
3	Նվերի, փոքր, թղթյա ՀԱԷԿ-ի ապրանքային նշանով, ապրանքային նշանի գույնը ոսկեգույն, տոպրակի գույնը փայլուն սպիտակ, չափսը՝ 22սմx25սմ:
7	Չափսը՝ 150x210 մմ, թերթերի քանակը 60, տողանի, Fedrigoni կամ համարժեքը, կազմը դեկորատիվ, ՀԱԷԿ-ի ապրանքային նշանի ստվերային պատկերով, Համաձայն ՀԱԷԿ-ի նմուշի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 07.02.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններում «Աբգար Խաչատրյան Նիկոլայի» Ա/Ձ-ի կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանել հրավերով սահմանված պահաջներին, մանավորապես՝

- 1-ին չափաբժնով պահանջվել է տուփում ներդիր՝ բարձր որակի թղթով և տպագրությամբ, ներդիրին պատկերված լինի ՀԱԷԿ-ի ապրանքային նշանը, տվալ երգչի կամ երաժիշտի լուսանկարը, հետադարձ կողմում՝ երգերի կամ կատարումների ցանկը (երգերի կամ կատարողների ցանկը համաձայնեցնել Պատվիրատուի հետ),
- 2-րդ չափաբաժնով պահանջվել է բարձր որակի տպագրություն,
- 3-րդ չափաբաժնով պահանջվել է՝ բռնակները թելիկներով, տոպրակի հետ միացումը մետաղական օղակների միջով:

Սակայն մասնակցի կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում տվյալ հատվածները բացակայել են, իսկ 2-րդ և 7-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում նշված է եղել «կամ համարժեքը» բառերը, ինչի արդյունքում հնարավոր չէ պարզել, թե ինչ ապրանքներ է առաջարկում Մասնակիցը:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է կասեցնել հայտերի գնահատման նիստը և առաջարկել է «Աբգար Խաչատրյան Նիկոլայի» Ա/Ձ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 11.02.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Աբգար Խաչատրյան Նիկոլայի» Ա/Ձ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի համաձայն:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.02.2020թ.-ի թիվ 26/26-1/2142-2020 գրությամբ «Աբգար

Խաչատրյան Նիկոլայի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի 1-ին մասի 4.3-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու մասին հրահանգի 2-րդ կետի 2.2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված թիվ 1.1-ի:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից հուշանվերների ձեռքբերման նպատակով 30.01.2020թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հրավերի թիվ 1 հավելվածով

նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 1-ին, 2-րդ, 3-րդ և 7-րդ չափաբաժիններով սահմանվել են ապրանքների հետևյալ բնութագրերը.

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Սկավառակ	DVD, սկավառակի վրա պատկերված լինի սկավառակում պարունակվող երգերի կամ կատարումների, երգչի կամ երաժիշտի լուսանկարը, պլաստմասե թափանցիկ տուփով, տուփում ներդիր՝ բարձր որակի թղթով և տպագրությամբ, ներդիրին պատկերված լինի ՀԱԷԿ-ի ապրանքային նշանը, տվյալ երգչի կամ երաժիշտի լուսանկարը, հետադարձ կողմում՝ երգերի կամ կատարումների ցանկը (երգերի կամ կատարողների ցանկը համաձայնեցնել Պատվիրատուի հետ), տուփը նախատեսված լինի 1 սկավառակի համար:
2	Գրիչ	ՀԱԷԿ-ի ապրանքային նշանով և կայանի անվանումով՝ Armenian Nuclear Power Plant, գրիչի ապրանքանիշը՝ Schneider կամ համարժեքը, լինի բարձր որակի տպագրությամբ, գույնը կապույտ:
3	Տոպրակ	Նվերի, փոքր, թղթյա ՀԱԷԿ-ի ապրանքային նշանով, ապրանքային նշանի գույնը լինի ոսկեգույն, տոպրակի գույնը փայլուն սպիտակ, բռնակները թելիկներով, տոպրակի հետ միացումը մետաղական օղակի միջով, չափը՝ 22սմx25սմ:
7	Նոթատետր	Չափը՝ 150x210 մմ, թերթերի քանակը 60, տողանի, Fedrigoni կամ համարժեքը 85գ/մ2, 0,5% դեղին երանգով, կազմը դեկորատիվ, Fedrigoni կամ համարժեքը, 300գ/մ2, միջուկի տպագրությունը՝ 2+0, ՀԱԷԿ-ի ապրանքային նշանի ստվերային պատկերով, առանց օրացույցի, կազմի դիմային հատվածում ՀԱԷԿ-ի ապրանքային նշանի արծաթափայլ, եռաչափ դաջվածք, միջուկի կողային մասերը արծաթափայլ, միջուկի էջերն ամրանում են կազմին արծաթափայլ մետաղական գալարներով վերևի մասից: Համաձայն ՀԱԷԿ-ի նմուշի:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Աբգար Խաչատրյան Նիկոլայի» Ա/Ձ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/20» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Մասնակիցը թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, 1-ին, 2-րդ, 3-րդ և 7-րդ չափաբաժինների համար առաջարկել է հետևյալ տեխնիկական բնութագրերը.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը
1	DVD, սկավառակի վրա սկավառակում պարունակվող երգերի, երգչի կամ երաժիշտի լուսանկարը, պլաստմասե թափանցիկ տուփով, տուփը նախատեսված 1 սկավառակի համար:
2	ՀԱԷԿ-ի ապրանքային նշանով և կայանի անվանումով՝ Armenian Nuclear Power Plant, գրիչի ապրանքանիշը՝ Schneider կամ համարժեքը, գույնը կապույտ:
3	Նվերի, փոքր, թղթյա ՀԱԷԿ-ի ապրանքային նշանով, ապրանքային նշանի գույնը ոսկեգույն, տոպրակի գույնը փայլուն սպիտակ, չափը՝ 22սմx25սմ:
7	Չափը՝ 150x210 մմ, թերթերի քանակը 60, տողանի, Fedrigoni կամ համարժեքը, կազմը դեկորատիվ, ՀԱԷԿ-ի ապրանքային նշանի ստվերային պատկերով, Համաձայն ՀԱԷԿ-ի նմուշի:

Հանձնաժողովի 07.02.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններում «Աբգար Խաչատրյան Նիկոլայի» Ա/Ձ-ի կողմից

առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանել հրավերով սահմանված պահաջներին, մանավորապես՝

- 1-ին չափաբժնով պահանջվել է տուփում ներդիր՝ բարձր որակի թղթով և տպագրությամբ, ներդիրին պատկերված լինի ՀԱԷԿ-ի ապրանքային նշանը, տվալ երգչի կամ երաժիշտի լուսանկարը, հետադարձ կողմում՝ երգերի կամ կատարումների ցանկը (երգերի կամ կատարողների ցանկը համաձայնեցնել Պատվիրատուի հետ),

- 2-րդ չափաբաժնով պահանջվել է բարձր որակի տպագրություն,

- 3-րդ չափաբաժնով պահանջվել է՝ բռնակները թելիկներով, տոպրակի հետ միացումը մետաղական օղակների միջով:

Սակայն մասնակցի կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում վերը նշված հատվածները բացակայել են, իսկ 2-րդ և 7-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում նշված է եղել «կամ համարժեքը» բառերը, ինչի արդյունքում հնարավոր չէ պարզել, թե ինչ ապրանքներ է առաջարկում Մասնակիցը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է կասեցնել հայտերի գնահատման նիստը և առաջարկել է «Աբգար Խաչատրյան Նիկոլայի» Ա/Ձ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 11.02.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Աբգար Խաչատրյան Նիկոլայի» Ա/Ձ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի համաձայն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը

համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ չշտկելով հայտում առկա արձանագրված անհամապատասխանությունները, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Աբգար Խաչատրյան Նիկոլայի» Ա/Ձ-ն, Պատվիրատուի կողմից հրավերի 8.9-րդ կետով սահմանված շտկման ժամանակահատվածում, չներկայացնելով թիվ 1.1 հավելվածում Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.02.2020թ.-ի թիվ 26/26-1/2142-2020 գրությամբ «Աբգար Խաչատրյան Նիկոլայի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/51 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Աբգար Խաչատրյան Նիկոլայի» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ